

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարադպրացիք գիմում են ուղղակի
Тифлисс. Редакция „Мусако“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է պատահում.— Եւրոպայի տեսողութիւնը: Անարդիւնաբեր վաճառականութիւնը: Նամակ Նոր-Նախիջևանից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսողութիւնը: Ֆրանսիա: Նամակ Թիւրքիայից:—Վշակիւն: Հեռագիրներ:—Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Հայ երկտառագրութիւնը:

ԻՆՉ Է ՊԱՏԱՀՈՒՄ

«Մշակի» 192 համարում տղպված լուրը Նուխու գաւառից այնքան տարօրինակ է, որ մենք կը հրաժարվէինք հաւատալ անգամ այդ լուրին, եթէ արժանահատ աղբիւրից ստացած չը լինէինք նրան:

Պ. Բեյճիշեվսկու, պ. Ալիբեկ-Վէզիրովի և նրանց նմանների արածի վրա մենք կը նայենք երկու տեսակէտից: Նախ միթէ մինչև այժմ մեր մանր մոնր պաշտօնեաները չեն հասկացել որ հրէան էլ մարդ է, և նրա հետ էլ պէտք է մարդավայել կերպով վարվել: Այժմ երբ մեր կառավարութիւնը արդէն տարածում է իր օրէնքների հաւասարութեան բարերար ազդեցութիւնը իր բո-

լոր հպատակների վրա, պէտք է վերջապէս հասկանանք որ հրէաներն էլ տէրութեան համար նոյնքան թանկագին հպատակներ են, որքան և նրա միւս հպատակները:

Ներկորդ՝ Նուխու գաւառի անցքերը մեզ ծանօթացնում են, առհասարակ, այն կամայականութեան հետ, որով շատ անգամ վարվում են մեր մանր պաշտօնեաները ժողովրդի հետ:

Հայտնի է, որ Նուխու գաւառի ուտիացիները երբեք դաւաճութեան են պատկանում՝ լուսաւորչական, յունական և մահմեւական: Մինչև վերջին ժամանակները բոլոր ուտիացիները իրանց մէջ շատ հաշտ և սիրով էին ապրում: Միայն վերջին ժամանակները նրանց մէջ երկպառակութիւն մտաւ մի քանի անձինքների, այն է մանր պաշտօնեաների ժողովրդի հետ անտակտ, անխոհեմ վարմանը շնորհիվ:

«ԿԱՅԱՅ» լրագիրը արտատպելով մեր լուրը ուտիացիների մասին, նկատում է թէ յունադաւան ուտիացի Ստեփան Բէժա-

նովի սպանութիւնը ընդհանուր կուսակցական պատճառից է առաջ եկել և ոչ թէ մասնաւոր կամ պատահական դէպքերից: Եթէ հետեւել ուս լրագրի սխալ ենթադրութեան, — որչափ և հաստատ աղբիւրներից նա ծագէր, — կարելի կը լինէր նմանապէս ասել թէ հինգ յայտնի լուսաւորչական ուտիացիների սպանումն էլ, որ եղաւ Բէժանովի մահից մի քանի ամիս առաջ, նոյնպէս ծագեց ընդհանուր կուսակցական պատճառից, մինչդեռ մենք հաստատ աղբիւրներից գիտենք, որ այդ անձինքների սպանմանը ոչ ոք չը տուեց ընդհանուր նշանակութիւն, որովհետեւ նրանք մնացին ինչպէս մասնաւոր անցքեր: Ի՞նչ է ուրեմն ջանք անում «ԿԱՅԱՅ» լրագիրը լուրից ուղտ շինել երբ այդ հինգ հոգիները յայտնի լուսաւորչադաւան ուտիացիներն են եղել, բայց դարձեալ այդ տխրալ անցքը մնաց աննկատել:

Ուշադրութեան արժանի է և այն որ Բէժանովի որ յունադաւան ուտիացիների առաջնորդ էր, ուս լրագրի ասելով և որի մա-

սին «ԿԱՅԱՅ» ակնարկում է թէ զոհ է գնացել լուսաւորչականների թշնամութեան, ինքն էլ մօտիկ ազդական էր լուսաւորչադաւան ուտիացիների ամենայայտնի անձինքներին:

Մեզ կասեն, որ այժմ երբ այդ ամբողջ խճճված խնդրի վրա դատաստանական ընտելութիւն է կատարվում, մամուլը իր դատողութիւններով չը պէտք է ճշնշումներգործի արդէն սկսված և դեռ չաւարտված ընտելութեան վերա: Այդ մտքի հետ մենք համաձայն ենք:

Բայց երբ դատաստանական ընտելութիւնը այն ձևով է կատարվում ինչ տեսակ սկսել են կատարել պ. պ. Բեյճիշեվսկին և Վէզիրովի, — այն ժամանակ մեր կարծիքով մամուլի պարտաւորութիւնն է ոչ թէ միայն խօսել, իր դատողութիւնները տալ այդ տեսակ ընտելների արածի վրա, բայց և ցանկանալ որ սկսված ընտելութիւնը ընդմիջվի, ընտելների ձեռքով գուցէ բոլորովին իզուր բանտարկվածների վիճակը խափու ուշադրութեանն առնվի և նոյն իսկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Անցնում են դէպի այն երկտառագրութիւնը, որ գիւղից դուրս չէ եկել, քաղաք չէ տեսել, որ դեռ պահպանել է իր պապերի ընտանեկան և աւանդական յատկանիշները:

Բարոյականութիւնը մանուկ սերունդի մէջ պահպանելու համար գիւղացի ծնողները աշխատում են շուտով ամուսնացնել իրանց որդիներին: 15—16 տարեկան հասակում նրանք արդէն կնոջ տէր են, իսկ դեռ քսան տարեկան չեղած, գաւառիկներ ունեն: Սովորած լինելով ամեն պէտքերի մէջ ընդունել ծնողների հաճութիւնը, և կնոջ ընտրութեան մէջ պատանին խնայարկում է նրանց կամքին: Նա իր սրտից չէ հարցնում՝ արդե՞ք սիրում է աղջկան, թէ ոչ, և կամայ—ակամայ հաշտվում է անհրաժեշտութեան հետ: Եւ ինչով կարող էր նա հասկանալ կնոջ լաւ կամ վատ յատկութիւնները, քանի որ նա երբեք կնոջ հասարակութեան մէջ չէր գտնվել, չէր փորձել, և չը գիտէր, թէ ինչպէս է վրում կնոջ սէրը Պատկեցին նրան մի աղջկայ հետ, լաւ թէ վատ, մի և նոյն է նրա համար, — այս է, որ կայ, — մտածում է նա, նրանով գոհանում է և նրա մէջ գտնում է իր բաւականութիւնները: Աթէ հայրը գնել էր մի նոր եղ, որդին շուտով կարող էր հաւանալ, թէ որքան այդ անասունը կարող էր

յարմարվել գործին, որովհետեւ շատ այսպիսիները փորձել էր նա, բայց կնոջ հետ գործ չէր ունեցել, կնոջ նրա համար մի անծանօթ առարկայ էր:

Կնոջ առհասարակ խիտ անմշակ դեր է խաղում գիւղական երկտառագրութեան վիճակի մէջ: Նա ապրում է փակված տան չորս պատերի մէջ և պահպանվում է սաստիկ նսկողութեան ներքոյ: Եւ եթէ պատահում է, որ նա անից դուրս է գալիս, հարկանի տղան իրաւունք չունի մօտենալ նրան կամ խօսել նրա հետ: Եւ ինչ հաճութիւն կարող էր գտնել երկտառագրութիւնը կանանց հասարակութեան մէջ, երբ նրանցից կարված էր, և երբ ամբողջ գիւղի մէջ չէր կարելի գտնել մի կամ երկու կնոյ, որ թեթիկ վարքի տէր լինէին: Եւ ակամայական եւ եղել մի ծիծաղելի հանդէս, թէ որպիսի խոյտառակութեամբ գիւղական հատարակութիւնից արտաքսում էին մի կնոյ: Նրան նստացրել էին էշի վրա գէպի հակառակ կողմը, այսինքն երեսը դարձրած դէպի գաւառը, և նոյնտայի (երասանակ) փոխարէն ձեռքումը բռնել էին տուել էշի աղին: Կնոջ գլուխը բոլորովին բաց էր և առանց ծածկոցի, ծամբը տափրել էին, իսկ երեսը սեպցրած էր մուրով: Մի մարդ քաշում էր էշի նոստան, իսկ երկու մարդիկ առջին ընկած, մէկը թմբուկ էր ամում, իսկ միւսը՝ դուռնայ: Բացմութիւնը աղաղակներով և կատակներով ճանապարհ էր դնում ողորմելի յանցաւորին դէպի գիւղից դուրս:

Պէտք է նկատել, որ բարոյականութիւնը պահպանելու համար գործ դրված այսպիսի խիտ միջոցները այժմ օրըստօրէ թուրանալու վրա են: Բարբերի ազգականութիւնը, որպէս ժանտախտ, սկսել է վարակել գիւղական մարդու պահված ժողովուրդը: Այս ախտից զերծ են մնացել այն գիւղերը միայն, որոնք առանձնացած են և քաղաքների հետ հաղորդակցութիւն չունեն և որոնք ապրվածի կամ աֆիցների երես դեռ չեն տեսել:

Պատահում է աւելի զգայուն բնաւորութիւն, որ իսկապէս սիրում է, սիրում է մի աղջկայ, որին տեսել էր, որի հետ գուցէ ունեցել էր մի քանի զգայնի խօսակցութիւններ: Բայց որդիների սէրը երբեք չէ մտնում ամուսնական հաշիւների մէջ, որոնք միանգամայն կարված են ծնողների կամքից: Որպէս որդին չէ կարող ուտել այն կերակուրը, որից լնքը անորոշում է, այլ պէտք է ուտէ այն, որ մայրը նրա համար պատրաստում է, — որպէս որդին չէ կարող հաշիւել այն հագուստը, որ ինքը ցանկանում է, այլ պէտք է հագնէ այն, որ հայրը նրա համար դնում է, — արդէն էլ պատանին չէ կարող կին ունենալ այն աղջկան, որին ինքը սիրում է, այլ նրան, որին ծնողները ընտրում են: Այս պարագայներին մէջ խիտ յատկանիշ է այն պատկը, որ տեղի էր ունեցել մի գիւղում. քահանան հարցնում է պատանուց ցոյց տալով նորահարկի վրա, թէ ամէր ես, սիրում ես: — «Չէ, պարսիկ, տէրտէր, նրանից հարցրու», պատասխանում է պատանին:

Առհասարակ սէրը գիւղացի պատանիների և աղջիկների մէջ լոյ բանաստեղծական փանտազմա է, որ վերջին տարիներում նիւթ դարձաւ մի քանի անհնորդ և անհամ վէպիկների, բայց կեանքի մէջ նա չը կայ: Վեր առէք մեր բոլոր ժողովրդական երգերը և աղջիկի վէպերը, նրանց մէջ չէք գտնի իսկական սէր իր հոգեբանական ճշգրիտ կողմերով: Բանաստեղծ խորին հիացմունքով գովում է կնոջ թուլ մաղերը, կարմիր թշերը, սեւաւրակ աչքերը, լինալի պէս ձգված հասակը, մարմարի նման ձեռքակ առամները, և այլն, մի խօսքով, նա յափշտակված է կնոջ արտաքին գեղեցկութիւններով միայն, բայց նրա հոգու և սրտի մէջ ոչինչ չէ տեսնում, նրա բնաւորութեան, բարքի և վարքի մէջ ոչինչ չէ գտնել բան չէ նկատում: Դա շատ բնական է: Ի՞նչպէս կարող էր սիրող թափանցել կնոջ սրտի և հոգու մէջ, երբ նրա

հետ յարաբերութիւն չէր ունեցել, նրա բերնից մի բառ անգամ չէր լսել: Իսկ յարաբերութիւնները մեր գիւղերում տղաների և աղջիկների մէջ միանգամայն կորված են: Տղային դաւում է աղջկայ արտաքին ֆիզիկական միայն, երբ հեռուից հեռու տեսնում է նրան, ինչպէս շատ մարդ կարող է յափշտակվել մի գեղեցիկ արձանի արտաքին կերպարանքով, բայց հոգին և սիրտը քննել չէ կարող, որովհետեւ նա սիրտ չունի, որովհետեւ նրա լեզուն չէ խօսում: Բայց հոգու արտայայտութիւնները արտաքին կերպարանքի վրա տեսնելու համար պէտք է ունենալ բաւական կրթված ճաշակ և նուրբ դիտողութիւն, որոնցից դուրկ է գիւղացին:

Տարվայ երեք եղանակներում, — գարունը, առաւել և աշունը, — գիւղացին այնքան զբաղված է իր մշակութիւններով, որ ամենին ժամանակ չունի իր սրտի հետ խօսելու: Այն ժամանակ գործում են նրա ֆիզիկական ուժերը միայն, իսկ հոգին մնում է անգործ: Բայց ձմեռը մի փոքր հանգստանում է նա, և դատարկութեան մէջ դարձնում են գիւղական հարսանիքները, որ մօտեցնում են տղամարդերին կնիկների հետ: Գիւղական հարսանիքը ամբողջ գիւղի հարսանիքն է: Վերջին աղքատը մասնակցում է այդ ընդհանուր ուրախութեանը, կերակրվում է նրա սեղանից և խմում է նրա գինին: Գիւղական հարսանիքը մի մեծ միջոցն է պատանիների համար, որոնք շատ դուրկ են մնում ուրախալի հանդէսներից: Հարսանիքը, նայելով փեսայի հօր կարողութեանը, տեսնում է մի քանի օրեր, առհասարակ երեք օրից պակաս չէ վրում: Յերեկները անց են կացնում ուտելով և խմելով, իսկ գիւղերից նուազարաններ անելով, պարզապէս և երբեք: Չունարաններ խաղը (եւ լիլ) այն բարբար խաղերից մէկն է, որ աւելի է տալիս

քննիչների ապօրինի վարմունքի վրա նոր և խիստ բնութագրիչ շանակվի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԱՐԴԻՒՆԱԲԵՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Մշակը» շատ անգամ խօսել է վաճառականական դասի ազդեցության յատկությունների վրա, նրա յայտնած մտքերը այնքան պարզ են, որ հազիւ թէ կարելի լինի հակառակել նրանց դէմ: Առաջ բերենք մի քանիսը այն մտքերի: Վաճառականը կապված է իր հայրենիքի հետ, նրա համար հայրենիքը չէ կայ, նրա հայրենիքը այնտեղ է, որտեղ առևտուրը լաւ է. նա շատ հեշտով թափափում է իր հայրենի հողը և հեռանում օտար երկիր փող աշխատելու: Այս մտքերը շատ լաւ կարելի է ապացուցանել մեր ազգի կենսի փաստերով: Վաճառականութիւնը հային մղել է դէպի Գանգես, դէպի Վոլգա, նա եղել է ազգի քայքայման գլխավոր ուժերից մէկը, թէպէտ նրա մէջ շատերը աշխատում են տնտես ազգի փառքը և ապագան: Տնտեսական կեանք մեր վաճառականութիւնը աւելի յափշտակութիւն է քան կանոնաւոր հասարակական աշխատութիւն. վաճառականը ոչինչ չէ արդիւնաբերում, նա թալանելով մեր երկրի նիւթական ուժերը, տեղափոխում է նրանց մի ուրիշ երկիր, որից ստանալով մշակած նիւթեր, շաւրունակում է թալանել մեր երկրը նրանց միջոցով: Անարդիւնաբեր և անօգուտ է այն աշխատութիւնը, որը չէ ստեղծում ոչ մի բարիք, ոչ նիւթական և ոչ մուսուրական, քանակաւ և աւելորդ են հասարակութեան մէջ այն մարդիկը, որոնք այսպիսի աշխատութիւն ունեն, տարաբաղաւոր այսպիսի մարդկանց թիւը շատ մեծ է թէ՛ կրթված և թէ՛ անկրթ հասարակութիւնների մէջ. ես վաւարակ եմ, որ դէպի ինձ ներդրումը կը լինեն,

եթէ մասնացոյց լինեմ մեր հողերական դասի մեծամասնութեան վրա. երբեք ազգի աւարդիւնաբեր ուժի վրա, ես չեմ ասում այն հողերականների մասին, որոնք համապատասխան իրանց բարձր կուսման ծառայում են ազգի մտաւորական և բարոյական զարգացման գործին: Ենթադրու առևտուրը այն ժամանակ է, երբ արդիւնագործող ուժերը մէկ մէկու պիտոյքները լրացնում են փոխադրաձարար: Գարբինը պատրաստում է խոփ, բահ, երկրագործը—հաց, առաջինին հարկաւոր է հաց, երկրորդին—խոփ, ուրեմն նրանք կարող են առևտուր անել իրանց մէջ, այստեղ աւելորդ են միջնորդներ. նոյն առևտուրը կարող է լինել դերձակի և կոշիկարի մէջ և բոլոր արդիւնագործողների մէջ: այսպէս վաճառականական դասի աշխատութիւնը անարդիւնաբեր է, երբ իսկական արդիւնաբերողները կարող են անմիջապէս հաղորդակցուել իրենց ունենալ մէկ մէկու հետ: Թողմովը հարստութիւնը աւելացնողներն են արհեստավորները, երկրագործները և մշտաւորական մշակները. առաջին երկուսները ստեղծում են նիւթական բարիքները, որոնք անմիջապէս լրացնում են մարդու պիտոյքները, վերջինները՝ ուսում և գիտութիւնը հաստատելով, միջոց են տալիս բնութեան ուժերը մարդու օգտին ծառայեցնելու, նոյնպէս սովորեցնում են մարդուն ապրել խելացի և համեմատ բարձր բարոյական գաղափարներին: Բոլոր ազգերը յամառութեամբ համոզված են, որ հայերը բացառապէս վաճառականներ են, իսկ ազգերից մէկն էլ (չեմ յիշում որը) կարծելիս է եղել, որ հայերը բոլորը հողերականներ են. ես համոզված եմ, որ իւրաքանչիւր հայ էր բոլոր հողերական կարողութեամբ կը բողբէ այս կարծիքների դէմ, որովհետեւ նրանք միայն տղիտութեան պտուղ են, սաւայն սրանով չը պէտք է բաւականանանք, հարկաւոր է անարդիւնաբեր միաւորների թիւը հասցնել ամենատար minimum-ի, մինչդեռ արդիւնաբերների թիւը—ամենաբարձր maximum-ի. միայն այս կերպով կազմակերպված ազգը իրաւունք ունի ապրելու, և ոչ թէ իրաւունք միայն, այլ և կենսական ուժ, որը կազմում է նրա գոյութեան իրաւունքը: Մեր ազգի մէջ վաճառականական գաղափարը աւելի տիրապետող է, միշտ մեր քաղաքներում հասարակա-

կան գործերը վաճառականի ձեռքին են, վաճառականը երեսփոխ է, նա հոգաբարձու է, նա դեպուստտ է, վերջապէս նա իշխան է, ինչպէս ժողովուրդը անուանում է հարուստ վաճառականներին. քաղաքը հարկ պէտք է տայ, իշխանն է իմանում: Նոր հարկ են մտցնում, էլի իշխանն է իմանում: իշխանն էլ իսկ օգուտները ամենից լաւ է իմանում: մի խաբէբայ մանրավաճառը աւելի պատուելի է քան իր քրտինքով ապրող արհեստավորը, հայի աչքում կուպէկանոց չարիքն լաւ փեսայացու է, քան աշխատասէր արհեստավորը: Բաւական է որքան որ առաջնորդեց մեզ այս կորուստ կան գաղափարը. թող մեր կեանքի դրօշակը վրա գրվեն աւելի փրկարար նշաններ արհեստների և երկրագործութեան, նրանց մէջ է փրկութիւնը, նրանց մէջ է մեր վերածնունդը: Թող ներեն ինձ մեր լրագրիւնները, նրանք բոլորովն անուշադիր են եղել դէպի վերոյիշեալ պարագմունքները. ո՞վ է ուսումնասիրել մեր արհեստավորների կամ երկրագործների դրուութիւնը, ո՞վ է ձայն բարձրացրել այն բարբաւրոսական սխտեմայի դէմ, որը թաղաւորում է վարպետների յարաբերութիւնների մէջ դէպի աշակերտները, ո՞վ է մտածել արհեստների կատարելագործութեան մասին մեղանում, ո՞վ է ընդունակ արհեստավորներին քաջալերելի...

Աշխատասէր է հայը, նա իր աշխատասիրութեամբ նմանվել է գրաստի. ամօթ մեզ, կասկից ավերից մինչև Բոսֆորը հարկաւոր հազարաւոր հայեր գրաստի դեր են կատարում պանդխտութեան մէջ, և դիտեք ո՞վ կը բարձրացնի նրանց աշխատական դրութիւնը—արհեստը: Վաճառականը սառնասիրտ կերպով կարող է նայել թէ ինչպէս հայ համայն մէջը կտրվում է նրա 10—15 պուգանաց հակի տակ, բայց ազգի խելացի անդամները, որոնք գիտեն աւելի արժանաւոր լինանք, պէտք է մտածեն ազատել և նրան այս ստրկական աշխատանքից, պէտք է միջոց տան նրան մարդավայել կեանք վարելու:

Մտածված

Ն. Արեւիկեանց

տղամարդերին չօչափել մի կնոջ ձեռք: Բայց այս տեղ ևս հայկական պարեկաշուութիւնը դրել է իր խիստ սահմանները: Պարի մէջ տղամարդը իրաւունք չունի բռնել մի օտար կնոջ ձեռք, նա անպատճառ պէտք է ընտրէ իր մօտ աղգակներին, կամ իր քրոջը, կամ մօրաքրոջը և այլն: Ամուսնաւոր կնիկները բոլորը դիմակաւորված են լինում, այսինքն երեսները ծածկված է լինում թանձր և անթափանցիկ քօղով, ոչինչ չէ կարելի տեսնել: Բայց ազգայ աղջիկների երեսները բաց են լինում: Կին և տղամարդ, աղջիկ և պատանի, միմեանց ձեռքից բռնած, կազմում են մի երկար շղթայ, որ զանազան ուղղութեամբ պտտւում է ընդարձակ տան մէջ: Սպանդարների ամբուլ եղանակով շարժվում են պարողները, լուռ ու մունջ կերպով, կարծես, կատարվում է մի բան, որ խորհրդաւոր պոստոմիմայով: Այն գիւղերում, ուր ժողովուրդը դեռ ևս գտնվում է նահապետական պարզութեան մէջ, տղամարդերի յարաբերութիւնը կնոջ հետ աւելի արձակ է, և հարսանիքների մէջ կամ զանազան տոնական հանդէսներում պարերը և խաղերը աւելի զուարճալի կերպարանք են ստանում: Հարսանիքի ժամանակ հայկական աւանդութիւնները երևան են գալիս իրանց նախնական պարզ կերպարանքով. հետաքրքիր աչքը կարող է տեսնել նրանց մէջ ժողովրդական հանճարի շատ ստեղծագործութիւնները, որ այժմ կորչելու, անհետանալու վրա են: Եթէ ունեցել ենք մեծ մի ժամանակ թատերական ներկայացումներ, եթէ մեր նախնիներն ևս գուարճացել են իրանց էպիկներին, Սփօսկիներին և Եւրպիդիսների արարչութիւններով, — այժմ նրանցից ոչինչ չէ մնացել, այժմ նրանց նրաջողներն միայն մնացել են գիւղական ժողովրդի մէջ, որ յայտնվում են զանազան հանդէսներում: Հարսանիքի համար ընտրում են առհասարակ ընդարձակ տներ, որ բաւական լինելը բազմութեան համար: Եթէ հարսանիքատեղը ընկալարանը փոքր

էր, դրանք տալիս է նրան իր տունը: Ամեն գիւղի սովորական կերպով, ուրախութիւնները և պարերը վերջանալէն յետոյ, լինում են մի տեսակ թատերական ներկայացումներ, որ Խաչիկ լեզուով կոչվում է օյի (խաչ): Դերասանների պաշտօն կատարում են գլխաւորապէս սազան՝ դաբնի (նուագածուկներ): Ներկայացում են ժողովրդի կենսից առանց ծիծաղաշարժ պատկերներ, երբեմն աւանց բովանդակութեան և երբեմն իրանց տեղեւորութեամբ անցնում են բարոյականութեան չափը: Բայց այդ կոչող, կոպիտ և սննդակ վողովները սաստիկ ազդում են մանուկ սրտերի վրա: Մանկուն նրանց մէջ տեսնում է այն գաղափարները, որոնք իր համար առաջ անորոշ էին, անբացատրելի էին: Վերջապէս պատանին ամուսնանում է: Հարսանիքի ուրախութիւնները շուտով անցնում են, որպէս թէ ոչինչ չէր պատահել և միւս օրը նորափեսան սկսում է իր սովորական պարագմունքը: Երկրի սկսվում է տաժանական կեանքը: Երկու նորապսակ ամուսինները յարաբերութիւնները հենց առաջին օրից խիստ օտարոտի ձև են ստանում: Գիւղացու ընտանիկան պայմաններին անմասնօր մարդը, տեսնելով նրանց կը կարծէ, թէ նրանք խռովել են, կամ միմեանց հետ անհաշտ են ապրում: Դրուով միասին չեն յայտնվում, իսկ տան մէջ միմեանց հետ չեն խօսում: Հարսը իր քօղը չէ բարձրացնում և երեք չէ ցոյց տալիս փեսային, եթէ այնտեղ ներկայ էր ընտանիքի անդամները: Եթէ Միւսայն չեն ձաշում, ընթրիք չեն ուտում: Երբ լին ուտում է հօր հետ, իսկ հարսը՝ սկիւրով հետ: Գիւղերում կանանց սուր սեղանը տղամարդերից բաժանված է: Այսպէս անցնում են տարիներ և շատ սարկներ: Հարսը տեսնում է իր ամուսնի հետ կամ գաղտնի, կամ գիւղեր, երբ բոլորը քնած էին: Ամուսնութիւնից յետոյ երիտասարդի վիճակը

փոխվում է ընտանիքի մէջ. հայրը նրա հետ այլ ևս խստութեամբ չէ վարվում, իսկ մայրը յարգում է: Նա այժմ այր է և ոչ տղայ: Նրա խօսքերը, նրա կարծիքները բանի տեղ են դնում, և նա ըստ կտուր է ձայն տալ ընտանիկան խորհուրդների մէջ: Բայց աստիճան յարաբերութիւնների մէջ չէ փոխվում, մնում է մի և նոյնը: Խորհուրդների մէջ գերակշռում է աւելի հասակաւորի կարծիքը: Եթէ նոր ամուսնացածը կրտսեր որդի էր, խաւարհովում է երեք եղբոր, իսկ երեք եղբայրը՝ հօրը: Ընտանիքի գլխաւորութիւնը պատկանում է նրան: Հօր մահից յետոյ նրա տեղը բռնում է անդրանիկ որդին: Որպէս կրտսեր եղբայրը հնազանդվում է երեք եղբոր, այնպէս էլ կրտսեր եղբոր կինը պէտք է հնազանդվի երեք եղբոր կնոջը: Ինձ շատ է պատահել տեսնել գիւղերում, երբ երեք եղբայրը իր հօրի հետ սեղան էր նստել, կրտսեր եղբայրը ոտքի վրա ծառայում էր նրանց: Ժողով եղբայրը այն աստիճան պատկաւում է և յարգում է մեծ եղբորը, որ աստիճան յարգում է և իր հօրը: Նրա ներկայութեամբ չէ ծխում, զինի կամ արագ չէ խմում, թէ և մեծ եղբայրը գիտէ բոլորը, և առհասարակ մատները միջից է նայում իրանից փոքրի այս տեսակ համեստութիւնների վրա: Հօր կենդանութեան ժամանակ որդիները մէջ բաժանում լինել կարող չէ. եթէ նրանցից մէկը անհազանդ էր գտնվում և խանգարում էր ընտանիկան կարգերի ներդաշնակութիւնը, արտաքսվում է ժամանակութիւնից գրկված: Հօր մահից յետոյ եղբայրները երկուսը շարունակում են դարձնալ միասին ապրել, մինչև նրանք ևս ունենում են որդիներ, որոնց ամուսնացնում են և թոռներին տէր են լինում: Տունը լցվում է աշաղիք բազմութեամբ, դերդաստանը ստուգարանում է և ընտանիքի կազմակերպութիւնը աւելի բազմադրեալ ձև է ստանում: Երբ հին սերունդը անցնում է, մնում են ջահիլները, այդ ժամանակ առաջ է գալիս բա-

մար. Եթէ հարսանիքատեղը ընկալարանը փոքր

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

29 հոկտեմբերի

Նորին սրբազնութիւն Մակար արքեպիսկոպոս թեմակալ առաջնորդ վիճակին հայոց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի, որ եկած էր այստեղ փիլիսոփայ 13-ին սեպտեմբերի, կրկին վերադարձաւ դէպի իր առաջնորդարանը 22-ին ամսին: Յայտնի է, որ Այվազեան Գաբրիէլ արքեպիսկոպոսից յետոյ մեր վիճակը անառաջնորդ էր մնացել: Այդ երկար միջոցին եկեղեցու պաշտօնականները չունենալով ի մօտոյ իրանց վրա հսկող մի հոգևոր իշխան, բաւականին չեղով էին ուղղի ճանապարհից: Գրեթէ չարաթ չէր անցնում, որ մեր անդուր քաղաքը ծայրէ ծայր չաղմկէր այս կամ այն տէր հօր անպաշտօն արարքից: Նրանց պատճառով հոգևորական դասի վարկը, համարումը, պատիւը ժողովրդի առջև նուազում էր: Սակայն դառնանք սրբազան առաջնորդին: Հէնց որ նա ոտք դրաւ մեր քաղաքի մէջ, մի նշմարելի երկիւղ տիրեց մեր հոգևոր դասին: Նրանց ընթացքին սրբազանը հարկաւ անտեղեակ չէր. ուստի իր գալու իսկ առաջին շաբաթը պարտք համարեց հանդիսաբար սաստիկ նրանց, որ զգաստանան, և պատճեց երեք քահանայ, որք արդէն ամենից զաւրան տարել էին: Նորիկ սրբազան առաջնորդի արած գլխաւոր գործն այս էր, որ նա ժողովրդի սէրն ու յարգանքը զրաւելով, կրկին ամրապնդեց նրա և հայրապետական աթոռի մէջ եղած միութեան կապերը:

Մակար արքեպիսկոպոսի ներկայութիւնը մեր քաղաքի մէջ մի նոր եռանդ տուաւ ժողովրդին աւելի ուշադրութիւն դարձնելու ազգային գործերի վրա, և քանի որ նա այստեղ էր, գրեթէ օր չէր անցնում, որ նա այցելութիւն չանէր տեղիս դպրոցներին, եկեղեցիներին, չուսումնասիրէր ժողովրդի պէս պէս կարկը, չը հաւաքէր իր մօտ ժողովրդի ներկայացուցիչներին, նրանց հետ ամբողջ հայ հասարակութեան կարևոր խնդիրները քննելու և սրանց իրագործութեան միջոցները դնելու համար:

Սեպտեմբերի 18-ին նորին սրբազնութիւնը այցելութիւն արաւ մեր հոգևոր դպրոցին, և երկու ժամի չափ աշակերտների ընտրութեամբ զբաղվելուց յետոյ, շատ գոհ մնաց նրանց յառաջդիմութիւնից և ջնքով խօսքերով քաջալերեց անոնցին և վարժապետներին անդուշ շարունակելու իրանց արդիւնաւոր ծառայութիւնը յօգուտ մանուկ սերնդի: Ի դէպ է մի քանի խօսք ասել այդ դպրոցի մասին: Ի սկզբանէ անտի մեր հոգևոր դպրոցը կամօք Վեհափառ Հայրապետի, դպրատան, այսինքն սեմինարիայի անունով բացված էր և մինչև անգամ նրան դպրատան կանոնադրութիւն չնորհ-

ժամանակը. յանկարծ մէկ մասնատված գերդաստանից կաղվում են 5—6 ընտանիքներ: Բայց նրա կատարելութեան արժանի է այն, որ գիւղացի հայերը չափազանց հեռատես են լինում և իրանց կենդանութեան ժամանակը կարգադրում են այն բոլորը, ինչ որ պէտք էր որդիներին ապագայ տնտեսութեան և ապրուստի համար: Օրինակ, մէկ հայր ունէր երեք որդի, գիտէր, որ իր մահից յետոյ, վաղ թէ ուշ, նրանք կը բաժանվեն, նա աշխատում է շինել իւրաքանչիւրի համար մի առանձին խորձիթ, և եթէ իր միջոցները չէին ներում այդ անիւ, նա գոնէ տալիս է իր տան շինութեանը այնպիսի ձև, որ կարելի լինէր երեք հաւասար մասերի բաժանել, որ յետոյ երեք որդիներին համար յարմար ընկալարաններ լինէին: Գիւղերում սովորաբար լավում է՝ այս ինչ աղայի եօթը ըրաղացները, եօթը օրավար հողը, եօթը այգիները, եօթը հօտ ոչխարները և այլն,—իսկոյն կարելի էր եղարկակել, թէ նա ունեցել է եօթը որդի, և ամեն մէկի համար առաջուց անօրինել է մի և նոյն կապերը, որ եղբայրներից իւրաքանչիւրը հաւասար չափով ստանար հօր ժառանգութիւնը: Ինչ իր բաժինը: Բայց եթէ հայրը այնքան աղքատ էր, որ իր կենդանութեան ժամանակ չը կարողացաւ տնօրինել որդիներին համար մի ապահով ապագայ, նրանից յետոյ որդիները այնքան ժամանակ միմեանց հետ անբաժան ապրում էին, միասին աշխատում են, մինչև կարողանում են վատաւել այնքան, որ բաւական կը լինէր իւրաքանչիւրի կանոնաւոր տնտեսութեան համար, եթէ հարկաւոր կը լինէր բաժանվել միմեանցից:

(Կը շարունակվի)

Պ. Եղիշէ վ. Մեծատունեանցի յօրինած ձեր
գարան արշիւանց և աշակերտութեաց Հայկա-
կան ուսումնարանաց» վերապրող գրքոյի¹
Հատորն արդէն տպագրված է: Օտարաբաղա-
քացի ցանկանդը կարող են դիմել Թիֆլի-
սում առ գրապաշտօնանոցն մեծ պ. Գրիգո-
րեանցի, իսկ Արաքլայայում առ Հեղինան պ.
Ե. Մեծատունեանց, և առ պ. պ. Զարու-
թիւն, Բագրատտ և Մկրտիչ Արապաճեանցն,
Խրաքանչիւր օրինակի գինն է¹ ըստ բի-
սութեան ծախքը առնողի վրա է:

ԱՌԵՏԻՏԻՍԿԱՆ ՏՈՒՆ ՀԻՇԻԱՆ ԻՎԱՆ ԿՈՆ-
ՏԱՆՏԻՆՈՎԻԶ ԲԱԳՐԱՏԻՐՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿԻ ՆԻ
ՆԿ.»

Իշխան Իշխան Կանտանտինովիչ Բագրատիով-
Մուխրանսկի յայտնում է, որ իր Հիմնած Ա-
ՌԵԻՏՍԱԿԱՆ ՏԱՆ բացումին և զորոգողութիւն-
ները կը սկսվեն ներկայ տարվայ նոյեմբերի
1-ից: Առևարական տան ԳՐԱՍՆԵՆԱԿԸ զը-
տնվում է Թիֆլիսում: Բուսկի բազար Հրա-
պարակի վրա ՏՈՒՆ № 10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Հրաւիրում է ցանկացողներին բնգունել 1) Ժամանակագր առեւտրական բնակարանների շինութիւնը Կախտախնայա Հրապարակ վրա, Հաւաքար և Ռուսաց վոդոյի վրա, 2) Սապօթնայա և Մալայա Վօրօվօնայա վոդոյների վրա գտնված քաղաքային տան շինութեան փոփոխելը և լրացնելը, ներկայ դռնվել աճրդախօսութեանը, որ լինելու է քաղաքային վարչութեան մէջ Հինգշաբթի նոյնի բերի 13-ին առաւօտեան 12 ժամին։ Առնուողը կը լինի բերանացի և վերջնական առաջաց կրկնաձուրդի։ Թոյլ է տրփում նոյնպէս ներկայացնել ծածկված յայտարարութիւններ։ Աճուրդը կարող է լինել թէ երկու գործերի համար միասին և թէ իւրաքանչիւրը առանձին։ Պայմանների և նախագծերի հետ կարելի է ծանուցանալ վարչութեան մէջ ամենից ար առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը, բացի տաներից։

1—3

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ
Մ Ե Մ Ա Դ Ի Բ Ե Ի Փ Ո Ք Բ Ա Դ Ի Բ
Օ Ր Ա Յ Ո Յ Յ Ք
1880 թ.

Հանդերձ Հորս Դոր Հետաքրքրական պատմ-
կերևերով

և

Մ ա ղ ե կ Բ ն տ ա ն ե ա ց ե . ա . յաւելու-
ածով: ԱրովՀետև. մենք արդէն բացեցիք Ն-
ՐԻԱՆՈՒՄ ս ե փ ա կ ա ն տպարան, ուստի մեր
ՕԼԻՑՈՅՆՆԵՐ կը լինեն պատրաստ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ մէջ:

Դուռնորդ գնողաց զիջումն կը լինի: Մեր
տպարանում ընդունվում են չափաւոր գներով
ԱՄՆԵ ՏԵՍԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԻԲ:

Մեր Հաացէն՝ ВЪ Әриванъ
А. Гуламирянцу. Արդար Դուռնորդնց
1-5

Կենդանի միայն Գրախմբառու եղողում Գվորցողի փորցիքի վրայ, Արծրունու Գալիլէյուն
աճաւոյւմ եւ չի տեւայ նոր, գրքերը:

1.	Կարմիր լապտեր, փոքրիկ մանկ նոց ընթերցանութեան համար.	Գ.	—	Բ.	50 Կ.
2.	— նոյնը առանց կազմի.	—	»	»	30 Կ.
3.	Քառամանգ մեղու փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար.	—	»	»	40 Կ.
4.	Եղբայր և քոյր մանկական վէպ. թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ	—	»	»	30 Կ.
5.	Հնկայական ձեռքեր. մանկական վէպ, թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ	—	»	»	10 Կ.
6.	Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդես ընտանեկան ընթերցանութեան համար.	1	—	»	— Կ.
7.	Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց	1	»	»	25 Կ.
8.	Երկունք իններորդ դարու. գործ Մերենցի.	1	»	»	— Կ.
9.	Պատանեկան ներշնչամենք, գործ. Հրաչիկ Սաստուրի.	—	»	»	60 Կ.
10.	Մի կաթիլ արտուր, գոր կը հեղու. Սիսակ հայ մոխրիկն վրայ	—	»	»	35 Կ.
11.	Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախոսութիւն Ս. Արծրունու.	—	»	»	50 Կ.
12.	Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ս. Բաբայանի	1	»	»	— Կ.
13.	Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատիներէնից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի	1	»	»	— Կ.
14.	Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանուկեանի	1	»	»	— Կ.
15.	Հայրական թատրոն. Վուլքը իմ վէշեր, փարս երեք պատկերով	—	»	»	40 Կ.
16.	Գործ. Մ. Տէր Գրիգորեանցի	—	»	»	25 Կ.
17.	Բերեր իրձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, թարգ. Ն. Լալայեանցի	—	»	»	25 Կ.
18.	Աշնանային երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբադադեանի	—	»	»	25 Կ.
19.	Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, թարգ. Գ.	—	»	»	40 Կ.
20.	Ժամուռ և Ժամուռ օպերա-փողովել, թարգ. Գ. Նահբադադեանցի	—	»	»	40 Կ.
21.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	30 Կ.
22.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
23.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
24.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
25.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
26.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
27.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
28.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
29.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
30.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
31.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
32.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
33.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
34.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
35.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
36.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
37.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
38.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
39.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
40.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի	—	»	»	50 Կ.
41.	Պաշտօնական երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով Մ. Տէր				

ԶԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

**ՆՈՐԱՆՈՒՄՆԵՐՆԵՐԻ ՄԵԴԻԱՆԵՐԻ ԶԻՒԹԻՑ, որ պատ-
րաստված է ՄԻԱԿԱՆ ՎԵՐԵՎՈՐԴՆԵՐԻ:**

ԳԻՐՇՖԵԼ ԴՏԻՑ

Գիւլյի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ
թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնադործու-
թեամբ և որովհետեւ պատիճների պատրաստելը գաղտնիք է
և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր
Չիլիից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված
պատիճները ֆԻՄՍԻԵԿԱՆ (ԳԻԻՕՅԻ) ՊԵՏԻՉ-
ԿԵԲԻՑ 40% էօման:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվին դէպի իմ աշխատանքը, որովհետեւ նորա առիթ հունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱ-ԱՆՀՄԱՆԵԱՆ ԱՐԻԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր ղեղատունները և տեղական պահեստները: Գլխավոր պահեստները. Մօսկվայում և Սուրբազգի ղեղատուն Եւ. Ի. Գիրշիչեւտի և Բ. Կեօբեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրինսկի և Բոստամովի ղեղատուն:

24—25

ՆՈՅԵՄԲԵՐԻ 8

8 6 7 6 4 5 3 0 3 3

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅՄԱՆՆՈՑ
(Նոյեմբերի 7-ին)
Ո ս Կ ի ն (պոստիպակներով)
Հին 84 պր. մ. սըծ. 1000 մ.
Հին 20 Կ. 72 պր. 1000 »
Վիրթիշին 5% առաջի փո-
խառնության տոմ. 100 »
Երկրորդ 5% վարկշին »
Մարսելի կուրսը 270—
Վաշտանի կուրսը Ողեսայի
կմա
Վենայի կուրսը արժե 121 դ.
Դաբրեյի ըսարալը
Առեարական ռանկի աղ-
ցիան 200 մ.
Փոֆի Թիֆլիսեան երկա-
թուղու ակցիան 125 մ.
Եղբայր բրոդկու . . .
» միւս տեսակը . . .
» տրանսապլը . . .
» մաքուր վճառած . . .
Բա մբա կը երևանու Ա-
մերիկայի սերմի . . .
Միւս տեսակը հին սերմից .
Բուրգը թուշի . . .
» թարաքամի . . .
Աւիւրը Եղբայրու . . .
» երևանի . . .
Գարին . . .
Մոմը ընաարակի (creap.)
Մեռաքսը Նուրակայ . . .
Կախեթ ռու . . .
Կոկոնը Նուրակայ (բոծ.)
Ֆրիգոնը (լասը) Ագու-
լիայ . . .
Կոֆէն Սօկոի . . .
» իւնանի . . .
» Մանտինիցն . . .

p.	q.
8	5
1470	—
245	—
235	—
230	—
100	—
9	55
100	—
4	85
310	—
—	—
7	40
7	15
5	30
5	30
10	—
8	—
7	40
7	50
4	—
2	20
—	—
1	40
12	40
180	—
140	—
50	—
65	—
26	—
22	—
18	—

	Բ. Կ
Վկայի և Անդրկուլ-	1
տալի բաղադրները . .	2
ստորիա	3
զգլի	4
բանասիրա	2 88
անսիրա	3 71

[illegible][illegible][illegible]

ընդունելու-
 ընտան 9-ից
 — ՆՈՐ
 Սեպտեմբեր
 էնք սոս
 մասին
 թեան
 նամակն
 տասրա
 — ՋԱՆ
 ցի. Նա
 հետև
 Իւրաք
 նամակի
 պէտք
 գրուի
 — ՇՈ
 մակից
 բունից
 — ՆՈ
 Նամակ
 ցեցին
 ցելու
 մի քան
 ցելի
 — ՄՈ
 տեղ զ
 թեան
 չը գտ
 խու. մ
 խաղա

ՆԱԽԻՋՆԵՒԱՆ. Գ. Մ.
Հերին շատ նամակներ
լից ցրել է, չէ գիտնէր որ
ք գրում: Խմբագրու-
մէ ատացած բոլոր
րին չէնք կարող պա-
նել:
11-04.11. Հիւլառե-
նաւ չէնք տալի, որով-
նա ստորագրած չէ:
Հիւլա յօղածիք և
հեղինակի ազգանունը
յայտնի լինի լամբա-
նել:
ՆԱԽԻՋՆԵՒԱՆ. Գ. Մ.
Հետաքրքիր չէ: Գը-
ղամբիւրը: Այլ այ-
նաների մասին մենք
ի նամակներ ենք ստա-